

Էներգիայի վերականգնվող աղբյուրները կնպաստեն Հայաստանի էներգետիկ անկախությանը

14:21, 25 Հունիս, 2011

ԵՐԵՎԱՆ, 25 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Աղվերանում այսօր մեկնարկեցին երկօրյա քննարկումներ «Հայաստանում վերականգնվող էներգետիկայի զարգացման» ձեռնարկ ծրագրի շուրջ: Քննարկումներին մասնակցում են Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ինչպես նաեւ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ծրագիրը պատրաստվել է «Danish Energy Management»-ի մասնակցությամբ:

Քննարկման կազմակերպիչներն են Հայաստանի վերականգնվող էներգետիկայի ու էներգախնայողության հիմնադրամը, «Expo Media» ցուցադրական կենտրոնը: Քննարկումներն անցնում են Համաշխարհային բանկի վերականգնվող էներգետիկայի ծրագրի շրջանակներում:

Այսօրվա կյոռ սեղանի թեման է՝ «Հայաստանի ներուժը օգտագործելու հնարավորությունները՝ սեփական մաքուր էներգետիկ ռեսուրսները էլեկտրական, ջերմային եւ վառելիքային էներգիայի ստացման համար»: Ծրագիրը ներառում է նախանշված թիրախների կարճաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ լուծումներ՝ միաժամանակ առաջարկելով խթանող քաղաքականության տարրեր: Վաղվա սեմինարների թեմատիկ բաժիններն են՝ «Փոքր հզորության հիդրոէլեկտրակայանների զարգացման հեռանկարները եւ խոչընդոտները», «Ցանցային հողմէներգետիկայի զարգացման հեռանկարները եւ խոչընդոտները», «Վերականգնվող էներգետիկայի ներթափանցումը տրանսպորտային ոլորտ»:

«Հայաստանը պետք է ճկուն քաղաքականություն վարի էներգետիկ ոլորտում՝ համարժեք արձագանքելու համար արտաքին փոփոխություններին էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործման ասպարեզում», - ասաց «Danish Energy Management»-ի ներկայացուցիչ Մորտեն Չոնդերգաարդը՝ ներկայացնելով «Հայաստանում վերականգնվող էներգետիկայի զարգացման ձեռնարկ» ծրագիրը: Այդ ոլորտի այլ գերակայություններից են երկրի էներգետիկ անվտանգության ապահովումը, էներգիայի ինքնարժեքի նվազեցումը, բարձր տեխնոլոգիաների խթանումը, շրջակա միջավայրի պահպանումը: Ըստ մասնագետի՝ միաժամանակ հարկավոր է բարեփոխել օրենսդրական դաշտը, ինչը կծառայի որպես վերականգնվող էներգետիկայի զարգացման խթանող ուժ:

Էներգիայի վերականգնվող աղբյուրների միջոցով Հայաստանում 2010թ. արտադրվել է 310 ԳՎտ/ժ էլեկտրաէներգիա, սակայն այդ ներուժը կարող է ավելանալ հինգ անգամ: Մասնավորապես, 2015թ. այդ ցուցանիշը կարող է հասնել 740, իսկ 2020-ին՝ 1500 ԳՎտ/ժ: